

ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

**«ԲԶՆԻ» ՆԱՆՔԱՅԻՆ ԶՐԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՓԲԸ-Ի ԴԻՄՈՒՄԻ ՆԻՄԱՆ ՎՐԱ
ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՍԳՐՔԻ 92-ՐԴ ՆՈՒՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 3-ՐԴ ԿԵՏԻ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱ-
ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Քաղ. Երևան

29 մարտի 2011թ.

Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.
Վ. Նովհաննիսյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի
(զեկուցող), Ա. Խաչատրյանի, Ն. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմողի ներկայացուցիչ Դ. Դանելյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՆՆ Ազգային ժողովի
պաշտոնական ներկայացուցիչ՝ ՆՆ Ազգային ժողովի նախագահի խորհրդական
Դ. Մելքոնյանի,

համաձայն ՆՆ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվա-
ծի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՆՆ օրենքի 25 եւ
69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ԲՅՆԻ» հանքային ջրերի
գործարան» ՓԲԸ-ի դիմումի հիման վրա՝ Նայաստանի Նանրապետության քաղաքա-
ցիական դատարանի օրենսգրքի 92-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ Նայաս-
տանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը
որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը «Բջնի» հանքային ջրերի գործարան» ՓԲԸ-ի՝ 07.10.2010թ. ՆՏ սահմանադրական դափարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հեփազոտելով Նայասարանի Նանրապեփության քաղաքացիական դափավարության օրենսգիրքը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայասարանի Նանրապեփության սահմանադրական դափարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Նայասարանի Նանրապեփության քաղաքացիական դափավարության օրենսգիրքն ընդունվել է ՆՏ Ազգային ժողովի կողմից 1998 թվականի հունիսի 17-ին, ՆՏ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի օգոստոսի 7-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

ՆՏ քաղաքացիական դափավարության օրենսգրքի՝ «Նայցադիմումը վերադարձնելը» վերաբառությամբ 92-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը սահմանում է. «Դափավորը վերադարձնում է հայցադիմումը, եթե գործն ընդհատված է փոխադարձաբանին»:

2. Քննության առարկա գործի դափավարական նախապայմությունը՝ ՆՏ սահմանադրական դափարան դիմելու պահին, հետեյալն է. դիմողը 22.09.2009թ. հայցադիմում է ներկայացրել ՆՏ վարչական դափարան ընդդեմ ՆՏ բնապահպանության նախարարության՝ վարչական մարմնի գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին:

13.10.2009թ. ՆՏ վարչական դափարանը թիվ ՎԴ/4234/05/09 վարչական գործով կայացրել է «Նայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշում: Դափարանը մասնավորապես գրել է, որ հայցադիմումի ընդունումը ենթակա է մերժման, քանի որ հայցադիմումով ներկայացված պահանջները բխում են քաղաքացիաիրավական հարաբերություններից և ՆՏ վարչական դափավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ընդհատված է վարչական դափարանին:

22.10.2009թ. դիմողը բողոք է ներկայացրել ՆՏ վարչական դափարան՝ վերջինիս՝ 13.10.2009թ. թիվ ՎԴ/4234/05/09 վարչական գործով կայացված՝ «Նայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշման դեմ: 28.10.2009թ. ՆՏ վարչական դափարանը կոլեգիալ կազմով կայացրել է «Նայցադիմումի ընդունումը

մերժելու մասին» 13.10.2009թ. որոշման դեմ դիմողի կողմից բերված բողոքը մերժելու մասին որոշում՝ վերահասարակելով ՆՏ վարչական դատարանի կողմից 13.10.2009թ. ներկայացված պարճառաբանությունները:

19.11.2009թ. դիմողը ՆՏ վարչական դատարանի՝ 28.10.2009թ. «Բողոքը մերժելու մասին» որոշման դեմ բողոք է բերել ՆՏ վճռաբեկ դատարան: ՆՏ վճռաբեկ դատարանն իր՝ 02.12.2009թ. «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշմամբ ներկայացված վճռաբեկ բողոքը վերադարձրել է՝ ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, ՆՏ վարչական դատավարության օրենսգրքի 118.6-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին չհամապատասխանելու հիմքով՝ ըստ էության վերահասարակելով ՆՏ վարչական դատարանի 13.10.2009թ. ներկայացրած պարճառաբանությունները:

28.12.2009թ. դիմողը հայցադիմում է ներկայացրել Երևանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ վերոնշյալ նույն պահանջով: 11.01.2010թ. դատարանը կայացրել է «Նայցադիմումը վերադարձնելու մասին» թիվ ԵԿԴ/3492/02/09 որոշումը: Նշված որոշմամբ դատարանը եզրահանգել է. «...ՆՏ բնապահպանության նախարարությունը հանդիսանում է գործադիր իշխանության հանրապետական մարմին, որն իրականացնում է վարչարարություն եւ հայցվորի կողմից ներկայացված պահանջը ծագել է հանրային իրավահարաբերություններից ... ուստի դատարանը գտնում է, որ նշված պահանջի դատական կարգով քննությունը վերոգրյալ իրավական նորմերին համապատասխան վերապահված է ՆՏ վարչական դատարանին եւ հայցը պետք է հարուցվեր ՆՏ վարչական դատարան, այդ իսկ պարճառով ներկայացված հայցադիմումը ենթակա է վերադարձման՝ ելնելով ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 92 հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներից»:

Դիմողը 11.01.2010թ. որոշման դեմ 18.01.2010թ. վերաքննիչ բողոք է ներկայացրել ՆՏ վերաքննիչ քաղաքացիական դատարան: ՆՏ վերաքննիչ քաղաքացիական դատարանն իր՝ 08.02.2010թ. որոշմամբ դիմողի բողոքը մերժել է՝ անփոփոխ թողնելով Երևանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ թիվ ԵԿԴ/3492/02/09 քաղաքացիական գործով կայացված՝ «Նայցադիմումը վերադարձնելու մասին» որոշումը: Ի հիմնավորումն նշված որոշման՝ դատարանը գտել է, որ նախարարության կողմից իրականացված վարչարարությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջը բխում է սույն գործով կողմերի միջեւ առաջացած

հանրային-իրավական հարաբերությունից եւ ընդդայա չէ առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դարձնելը:

23.02.2010թ. դիմողը վերաքննիչ դարձնելու 08.02.2010թ. որոշման դեմ վճռաբեկ բողոք է ներկայացրել ՏՏ վճռաբեկ դարձնելու:

ՏՏ վճռաբեկ դարձնելու, ղեկավարվելով ՏՏ քաղաքացիական դատարանության օրենսգրքի 233-րդ եւ 234-րդ հոդվածներով, իր` 07.04.2010թ. որոշմամբ վերադարձրել է դիմողի վճռաբեկ բողոքը` ՏՏ քաղաքացիական դատարանության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներին չհամապատասխանելու հիմքով` ըստ էության վերահաստատելով ՏՏ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 08.02.2010թ. որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Սահմանադրական դատարանում գործը դարձնելու նախապայտրաստելու փուլում պարզվել է, որ սահմանադրական դատարան դիմելուց հետո դիմողը դիմել է ՏՏ վճռաբեկ դարձնելու` խնդրելով նոր երեսան եկած հանգամանքի հիմքով վերանայել ՏՏ վճռաբեկ դարձնելու 07.04.2010թ. որոշումը:

ՏՏ վճռաբեկ դարձնելու իր` 10.01.2011թ. որոշմամբ բավարարելով վճռաբեկ բողոքը` որոշել է. «Վերանայել ՏՏ վճռաբեկ դարձնելու քաղաքացիական եւ վարչական պալատի 07.04.2010 թվականի... որոշումը: Վերացնել ՏՏ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 08.02.2010 թվականի որոշումը եւ կայացնել նոր դատական ակտ. վերացնել Երեսանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դարձնելու 11.01.2010 թվականի «Նայցադիմումը վերադարձնելու մասին» որոշումը»:

Վերը նշված որոշմամբ ՏՏ վճռաբեկ դարձնելու հիմք է ընդունել այն հանգամանքը, որ դիմողի կողմից ՏՏ վճռաբեկ դարձնելու միջոցով` ՏՏ վճռաբեկ դարձնելու 07.04.2010թ. որոշումը կայացվել է մինչեւ նույն դարձնելու կողմից 03.12.2010թ. թիվ ԵԱԶԳ/1369/05/09 որոշման կայացումը, որով վճռաբեկ դարձնելու սահմանել է օրենքի միատեսակ կիրառության սահմանները: Նախկին առնելով վերոգրյալը` ՏՏ վճռաբեկ դարձնելու գրել է, որ «սույն գործով Ընկերությունը գրկվել է ՏՏ Սահմանադրության 19-րդ հոդվածով եւ «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված դատական պաշտպանության իրավունքից»: Նշված որոշմամբ վճռաբեկ դարձնելու արձանագրել է, որ «...սույն գործը ենթակա է քննության ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դարձնելու»:

3. Դիմողը գտնում է, որ վիճարկվող նորմը չի բավարարում իրավական որոշակիության պահանջները եւ «ընդդատության» բացահայտման իմաստով դատական պրակտիկայում հանգեցնում է փարաբնույթ, հակասական մեկնաբանությունների:

Դիմողը նշում է, որ վիճարկվող նորմի՝ «ընդդատության» բացահայտման իմաստով, դատական պրակտիկայում սխալ մեկնաբանության արդյունքում ինքը գրկվել է դատական պաշտպանության իր իրավունքն իրականացնելու հնարավորությունից: Ըստ դիմողի՝ վիճարկվող նորմը՝ «ընդդատության» բացահայտման իմաստով, հակասում է ՆՏ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածների պահանջներին:

4. Պարասխանողը, վերլուծելով ՆՏ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված դրույթների բովանդակությունը, նշում է, որ ֆիզիկական եւ իրավաբանական անձանց համար սահմանադրական դատարան դիմելու հնարավորությունը ծագում է քաղաքացիաիրավական, վարչաիրավական վեճերի կարգավորման, ինչպես նաեւ քրեական մեղադրանքի կապակցությամբ կայացված վերջնական դատական ակտի առկայության եւ նշված վեճերի ու քրեական մեղադրանքի լուծման իրավագործությամբ օժտված դատական մարմիններում պաշտպանության միջոցներն սպառելու պայմաններում:

Նաշվի առնելով այն հանգամանքը, որ ՆՏ վճռաբեկ դատարանի 2011թ. հունվարի 10-ի որոշմամբ վերանայվել է ՆՏ վճռաբեկ դատարանի 07.04.2010թ. որոշումը եւ երաշխավորվել է դիմողի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքը՝ պարասխանողը գտնում է, որ դիմողը չի սպառել դատական պաշտպանության միջոցները, ուստի միջնորդում է քննության առարկա գործի վարույթը կարճել:

5. Ֆիզիկական եւ իրավաբանական անձանց կողմից սահմանադրական դատարան դիմելու կարգը սահմանված է ՆՏ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 69-րդ հոդվածով:

ՆՏ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն. Սահմանադրությամբ եւ սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով սահմանադրական դատարան կարող է դիմել «...յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ **առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները** եւ վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը»:

«Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Սույն հոդվածում նշված գործերով դիմում (այսուհետ՝ անհատական դիմում) կարող է ներկայացվել ընդհանուր իրավասության եւ մասնագիտացված դատարաններում դատավարության մասնակից հանդիսացած այն ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից, որի նկատմամբ գործը լուծող վերջնական դատական ակտով կիրառվել է որեւէ օրենքի դրույթ, որը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները, եւ որը գտնում է, որ Կրկնակի գործով կիրառված օրենքի դրույթը հակասում է Սահմանադրությանը»:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՆՏ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին եւ 7-րդ մասերով սահմանված իրավակարգավորումը խախտված է այն տրամաբանության վրա, որ ֆիզիկական եւ իրավաբանական անձինք իրենց խախտված իրավունքները, նախեւառաջ, պետք է պաշտպանեն ընդհանուր իրավասության եւ մասնագիտացված դատարաններում: Ըստ այդմ, ՆՏ օրենսդրությունը որպես սահմանադրական դատարանի դիմելու նախապայման սահմանել է **դատական պաշտպանության միջոցներն սպառելու պարտականություն եւ վերջնական դատական ակտի առկայության պահանջ:**

Գործի նյութերի վերլուծությունից բխում է, որ ՆՏ վճռաբեկ դատարանը վերանայելով իր որոշումը՝ հիմք է սպեղծել ՆՏ Սահմանադրության 19-րդ հոդվածով ու Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված՝ դիմողի՝ դատարանի մարտնչության իրավունքի իրացման համար: Իսկ դիմողի փաստարկները հիմնականում վերաբերում են ոչ թե ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 92-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի բուն բովանդակությանը, որն իրավաչափորեն նախատեսում է, որ «Դատավորը վերադարձնում է հայցադիմումը, եթե գործն ընդդարյա չէ Կրկնակի դատարանին», այլ այդ նորմի այնպիսի կիրառմանը,

որն արգելափակել էր դատարանի մարզելիության իր իրավունքի իրացումը, ինչը ՏՏ վճռաբեկ դատարանի 10.01.2011թ. որոշմամբ երաշխավորվել է:

Նշված հանգամանքը հաշվի առնելով՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործը քննության ընդունելու համար հիմք հանդիսացած վերջնական դատական ակտի՝ ՏՏ վճռաբեկ դատարանի 07.04.2010թ. որոշման վերանայման եւ իրավական ուժը կորցնելու պայմաններում այլեւս առկա չէ սահմանադրական դատարանում գործի քննության համար անհրաժեշտ նախապայման հանդիսացող վերջնական դատական ակտը, դրանով իսկ դիմողի համար դեռեւս չեն սպառվել դատական պաշտպանության միջոցները:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ կետի, 60-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով, Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Բջնի» հանքային ջրերի գործարան» ՓԲԸ-ի դիմումի հիման վրա՝ Նայասարանի Նանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 92-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ Նայասարանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել:

2. Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՏՈՂ

Վ. ՆՈՎԱԿՆՆԻՄՅԱՆ

29 մարտի 2011 թվականի
ՍԴՈ-946